ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/77

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«Գուտապ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Սարգսյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9262-2019 գրությամբ «Գուտապ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 29.05.2019թ. թիվ 20/434 գրության հիման վրա, 04.06.2019թ. «Գուտապ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 29.05.2019թ. թիվ 20/434 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 45-րդ կետի համաձայն Ձեզ եմ ներկայացնում ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 30.04.2019թ. ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-3/19-Ա/ՄԱՍԵՐ ծածկագրով հայտարարված գնանշման հարցման մասնակիցի՝ «Գուտապ» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-3/19-Ա/ՄԱՍԵՐ» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Գուտապ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորության առկայության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Գուտապ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.06.2019թ.-ին գրությամբ դիմել է «Գուտապ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9262-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

«Գուտապ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված գրությամբ հայտնել է, որ.

«Օրենքով սահմանված կարգով գնումների մասնակցելու ժամանակ մեր ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել ենք 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ ժամկետանց

պարտավորություններ՝ դրոշմանիշային վճարի գծով: Տվյալ պարտավորության մասին մենք տեղյակ չենք եղել, այսինքն հաշվապահության կողմից ժամանակին վճարումներ կատարելիս դրոշմանիշային վճարների գումարները մեխանիկական սխալի պատճառով վճարվել է այլ հարկատեսակի հաշվեհամարին, որի արդյունքում էլ այլ հարկատեսակների գծով մեր ընկերությունը ունեցել է գերավճար, իսկ դրոշմանիշային վճարի մասով պարտավորություն: Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի 21.05.2019թ.-ի դրությամբ /ապրիլ ամսվան վերաբերվող/ բոլոր հարկային հաշվարկների և վճարումների վերահաշվարկի արդյունքում մեր ընկերությունը նույնիսկ միասնական հաշվում ունեցել է 109 424 ՀՀ դրամ, ընդ որում յուրաքանչյուր ամիս մեր կազմակերպությունը ունեցել է գերավճարներ: Երբ տեղեկացել ենք տվյալ պարտավորության մասին, անմիջապես մարել ենք /կից ներկայացնում ենք վճարման անդորրագրերը/:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Գուտապ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/77 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 30.04.2019թ. հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-3/19-Ա/ՄԱՍԵՐ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

07.05.2019թ.-ին Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գուտապ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Գուտապ» ՍՊԸ-ն մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից 16.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Գուտապ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (07.05.2019թ.) օրվա դրությամբ

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 3 000 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2019թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է «Գուտապ» ՍՊԸ-ի հայտը մերժել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների թույլատրելի շեմը գերազանցելու հիմքով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 07.05.2019թ. դրությամբ «Գուտապ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 23.05.2019թ. Ընկերությանը տրված թիվ 738 տեղեկանքի համաձայն՝ 3 000 ՀՀ դրամ գումարի չափով պարտավորությունը գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9262-2019 գրությամբ «Գուտապ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ … գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նար Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին

տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները. … իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում:

Նույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 30.04.2019թ. հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-3/19-Ա/ՄԱՍԵՐ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում «Գուտապ» ՍՊԸ-ն մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից 16.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Գուտապ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (07.05.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 3000 ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Մասնակիցը, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, իրացրել է այն, համոզված լինելով դրա օրինականության և ճշտության մեջ՝ որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գուտապ» ՍՊԸ-ն, արտատպելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, չէր կարող չունենալ լիարժեք և միևնույն ժամանակ օբյեկտիվ համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Գուտապ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (07.05.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա ժամկետանց պարտավորություն, քանի որ այն, ինչպես ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածն է սահմանում, պետք է համարվի որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն, և անհրաժեշտության դեպքում ընդունվի այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9262-2019 գրությամբ «Գուտապ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**